

Հայտարարություն

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Ագարակաձոր, Արփի, Մոզրով բնակավայրերի դպրոց ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման խորհուրդը

հայտարարում է բաց մրցույթ՝ Վայոց ձորի մարզի Ագարակաձորի Յուրա Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար: Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,

2. ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր): Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը, 3. հաստատության ղեկավարման իրավունքի / հավաստագրի / պատճենը,

4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով, 5. ինքնակենսագրություն: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Վայոց ձորի մարզի Ագարակաձորի Յուրա Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ում 2021թ.-ի նոյեմբերի «04» - ից մինչև 2021թ.-ի նոյեմբերի «25» - ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից մինչև ժամը 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2021թ.-ի դեկտեմբերի «09» - ին՝ ժամը 14:00 – ին «Վայոց ձորի մարզի Ագարակաձորի Յուրա Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ում:

Հասցե՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Ագարակաձոր բնակավայր, 1 փողոց, շենք 17:

Տեղեկությունների համար զանգահարել 099 99 33 36 հեռախոսահամարով: